

## ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀՀ Սահմանադրության փոփոխությունների վերջնական նախագծում ՀՀ փաստաբանների պալատի աշխատանքային խմբի կողմից նախկին տարբերակի վերաբերյալ արված առաջարկությունների ընդունման կամ մերժման վերաբերյալ \***

№	Նախագծի՝ աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրված տարբերակ	Աշխատանքային խմբի կողմից արված առաջարկներ	Նախագծի վերջնական տարբերակ	Մեկնաբանություններ
1.	<p><b>Հոդված 5. Իրավական նորմերի աստիճանակարգությունը</b></p> <p>2. Ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նորմերը գերակայություն ունեն օրենքների նկատմամբ: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:</p>	<p>Առաջարկվել է հանել առաջին նախադասությունը:</p>	<p><b>Հոդված 5. Իրավական նորմերի աստիճանակարգությունը</b></p> <p>2. Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին եւ օրենքներին:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Նշված նախադասությունը հանվել է տեքստից:</p>
2.	<p><b>Հոդված 6. Օրինականության սկզբունքը</b></p> <p>2. Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական</p>	<p>Առաջարկվել է 2-րդ մասում «Լիազորող նորմերը» բառերը փոխարինել «Օրենքները և նորմատիվ իրավական այլ ակտերը» բառերով:</p>	<p><b>Հոդված 6. Օրինականության սկզբունքը</b></p> <p>2. Սահմանադրության եւ օրենքների հիման վրա եւ դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p>

\* Համեմատությունները կատարվել են ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի սկզբնական և վերջնական տեքստերի միջև:

	նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:		իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:	
3.	<b>Հոդված 11. Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը</b> 1. Հանրային իշխանությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունն ու վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների հանդեպ:	Առաջարկվել է 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հանրային իշխանությունը պարտավոր է ապահովել շրջակա միջավայրի պահպանությունն ու վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ գիտակցելով իր պատասխանատվությունն ապագա սերունդների հանդեպ՝ օրենքին համապատասխան:»	<b>Հոդված 12. Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը</b> 1. Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:	Առաջարկը չի ընդունվել:
4.	<b>Հոդված 17. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին</b> 2. Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել հատուկ համաձայնագրով:	Առաջարկվել է 2-րդ մասում «հատուկ համաձայնագրով» բառերը փոխարինել «օրենքով» բառով:	<b>Հոդված 18. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին</b> 2. Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով:	Առաջարկն ընդունվել է:
5.	<b>Հոդված 24. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը</b>	Առաջարկվել է 1-ին մասից հանել երկրորդ նախադասությունը:	<b>Հոդված 25. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը</b>	Առաջարկը չի ընդունվել:

	<p>1. Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք: Այս իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության, այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:</p>		<p>1. Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք: 2. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության եւ բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակով:</p>	
6.	<p><b>Հոդված 25. Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը</b></p> <p>1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:</p>	<p>Առաջարկվել է 1-ին մասում «վերաբերմունքի կամ պատժի» բառերը փոխարինել «պատժի կամ վերաբերմունքի», որպեսզի տարընթերցում չլինի, թե ոչ ոք առհասարակ չի կարող ենթարկվել պատժի, այլ խոսքը վերաբերվի նվաստացնող պատժի արգելքին:</p>	<p><b>Հոդված 26. Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը</b></p> <p>1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p>

7.	<p><b>Հոդված 26. Անձնական ազատությունը</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոքի չի կարելի անձնական ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.</p> <p>6) հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև, երբ անձն ունի հոգեկան խանգարում, թմրամոլ կամ գինեմոլ է:</p> <p>5. Մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու պայմանագրային պարտավորությունները:</p>	<p>Առաջարկվել է 1-ին մասի 6-րդ կետը շարադրել այնպես, որ հարբեցող կամ թմրամոլ անձն ինքնին չի կարող ազատազրկվել, և անհրաժեշտ է նախագծում շեշտադրում կատարել, որ վերջիններս առնվազն պետք է վտանգ ներկայացնեն, որպեսզի ազատազրկվեն:</p> <p>Առաջարկվել է 5-րդ մասում «պայմանագրային» բառը փոխարինել «քաղաքացիաիրավական» բառով:</p>	<p><b>Հոդված 27. Անձնական ազատությունը</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝</p> <p>6) հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձանցից բխող վտանգը կանխելու նպատակով.</p> <p>6. Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները:</p>	<p><b>Առաջարկն ընդունվել է:</b></p>
----	--	---	---	-------------------------------------

<p>8.</p>	<p><b>Հոդված 29. Խտրականության արգելքը</b>          Խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:</p>	<p>Առաջարկվել է ավելացնել հետևյալ խմբագրությամբ նոր մաս «Խտրականությանը կամ անհավասարությանը նպաստող, կանանց և տղամարդկանց իրավահավասարության արդյունավետ իրականացմանը խոչընդոտող սոցիալական, տնտեսական, մշակութային և այլ հիմնապատճառների հաղթահարման համար կիրառելի միջազգային պայմանագրերի համաձայն կարող են կիրառվել դրական խտրականություն կամ անհավասարություն ենթադրող հատուկ ժամանակավոր միջոցներ:»:</p>	<p><b>Հոդված 29. Խտրականության արգելքը</b>          Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p>
<p>9.</p>	<p><b>Հոդված 32. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը</b>          2. Հաղորդակցության գաղտնիությունը որոշակի ժամկետով կարող է սահմանափակվել միայն օրենքով, դատարանի որոշմամբ՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման, մարդկանց կյանքին, առողջությանը և գույքին սպառնացող վտանգը կանխելու</p>	<p>Առաջարկվել է նախորդ խմբագրությամբ հոդվածի 2 մասում «օրենքով» բառը փոխարինել «օրենքով սահմանված դեպքերում և կարգով» բառերով:</p>	<p><b>Հոդված 33. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը</b>          2. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության եւ բարոյականության</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p>

	նպատակով:		կամ այլոց հիմնական իրավունքների ազատությունների պաշտպանության նպատակով:	
10.	<b>Հոդված 33. Անհատական տվյալների պաշտպանությունը</b> 3. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իր մասին հավաքագրված տվյալներին և պահանջելու ոչ հավաստի տվյալների շտկում, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված կամ այլևս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում:	Առաջարկվել է 3-րդ մասում «պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում» բառերը փոխարինել, հանրային կամ մասնավոր իրավունքի սուբյեկտի մոտ» բառերով:	<b>Հոդված 34. Անձնական տվյալների պաշտպանությունը</b> 3. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իր մասին հավաքված տվյալներին և պահանջելու ոչ հավաստի տվյալների շտկում, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված կամ այլևս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում:	Առաջարկը չի ընդունվել:
11.	<b>Հոդված 34. Ամուսնանալու ազատությունը</b> 1. Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդն իրենց կամքի ազատ արտահայտությամբ միմյանց հետ ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք ունեն: 2. Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս նրանք օգտվում են հավասար իրավունքներից: 3. Այս իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝	Աշխատանքային խումբն արտահայտել է իր մտահոգությունն առ այն, որ տարընթերցման վտանգ կա, թե որ իրավունքը կարող է սահմանափակվել՝ հավասար իրավունքներից օգտվելու, թե՛ ամուսնանալու:	<b>Հոդված 35. Ամուսնանալու ազատությունը</b> 1. Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք ունեն: Ամուսնության տարիքը, ամուսնության և ամուսնալուծության կարգը սահմանվում են օրենքով: 2. Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս կինը և տղամարդը ունեն	Առաջարկն ընդունվել է, հոդվածը վերախմբագրվել է:

	<p>հանրային շահերի պաշտպանության նպատակով: Ամուսնության տարիքը, ամուսնության և ամուսնալուծության կարգը սահմանվում են օրենքով:</p>		<p>հավասար իրավունքներ: 3. Ամուսնանալու ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ առողջության եւ բարոյականության պաշտպանության նպատակով:</p>	
12.	<p><b>Հոդված 38. Մարդու ազատ գործելու իրավունքը</b>          Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլ անձանց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին:</p>	<p>Առաջարկվել է ավելացնել նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով»:</p>	<p><b>Հոդված 39. Մարդու ազատ գործելու իրավունքը</b>          Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները եւ չի հակասում Սահմանադրությանը եւ օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:</p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>
13.	<p><b>Հոդված 41. Կարծիքի ազատությունը և տեղեկատվության ազատությունը</b>          3. Սույն հոդվածով սահմանված իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության, այլոց պատվի ու բարի համբավի, ինչպես նաև այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:</p>	<p>Առաջարկվել է 3-րդ մասում «օրենքով» բառը փոխարինել «օրենքով սահմանված դեպքերում և կարգով» բառերով:</p>	<p><b>Հոդված 42. Կարծիքի արտահայտման ազատությունը</b>          3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության եւ բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի եւ այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p>

14.	<p><b>Հոդված 42. Ստեղծագործության և դասավանդման ազատությունը</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական, տեխնիկական ստեղծագործության և դասավանդման ազատություն:</p>	<p>Առաջարկվել է շարադրել հետևյալ խմբագրությամբ ««Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք»»:</p>	<p><b>Հոդված 43. Ստեղծագործության ազատությունը</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատություն:</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p>
15.	<p><b>Հոդված 43. Հավաքների ազատությունը</b></p> <p>4. Այս իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի պաշտպանության, հանցագործությունների կանխման, առողջության և բարոյականության, այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:</p>	<p>Առաջարկվել է 4-րդ մասում «օրենքով» բառը փոխարինել «օրենքով սահմանված դեպքերում և կարգով» բառերով:</p>	<p><b>Հոդված 44. Հավաքների ազատությունը</b></p> <p>5. Հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության եւ բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակով:</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p>
16.	<p><b>Հոդված 44. Միավորումների ազատությունը</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք այլ անձանց հետ ազատորեն միավորվելու իրավունք ունի, ներառյալ աշխատանքային շահերի</p>	<p>Առաջարկվել է 2-րդ մասից հանել «մասնավոր» բառը:</p>	<p><b>Հոդված 45. Միավորումների ազատությունը</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ ազատորեն միավորվելու, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p>

	<p>պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելը և դրանց անդամագրվելը:</p> <p>2. Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվել որևէ մասնավոր միավորման:</p>		<p>արհեստակցական միություններ ստեղծելու եւ դրանց անդամագրվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվել որեւէ մասնավոր միավորման:</p>	
17.	<p><b>Հոդված 45. Կուսակցություն ստեղծելու և կուսակցության անդամագրվելու իրավունքը</b></p> <p>4. Այն կուսակցությունները, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով, հակասահմանադրական են և ենթակա են արգելման Սահմանադրական դատարանի որոշմամբ: Օրենքով սահմանված դեպքերում կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել Սահմանադրական դատարանի որոշմամբ:</p>	<p>Առաջարկվել է 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Սահմանադրական կարգի բռնի տապալում քարոզող կամ սահմանադրական կարգը տապալելու նպատակով բռնություն կիրառող կուսակցությունների գործունեությունը Սահմանադրական դատարանի կողմից կարող է ճանաչվել հակասահմանադրական և արգելվել: Օրենքով սահմանված դեպքերում, Սահմանադրական դատարանի որոշմամբ, կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել:»:</p>	<p><b>Հոդված 46. Կուսակցություն ստեղծելու եւ կուսակցության անդամագրվելու իրավունքը</b></p> <p>4. Օրենքով նախատեսված դեպքերում կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել Սահմանադրական դատարանի որոշմամբ: Այն կուսակցությունները, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով, հակասահմանադրական են եւ ենթակա են արգելման Սահմանադրական դատարանի որոշմամբ:</p>	Առաջարկը չի ընդունվել:
18.	<p><b>Հոդված 47. Ընտրական իրավունքը և հանրաքվեների մասնակցելու իրավունքը</b></p> <p>4. Ընտրելու և ընտրվելու, ինչպես</p>	<p>Առաջարկվել է 4-րդ մասում «ծանր» բառից հետո լրացնել «կամ առանձնապես ծանր» բառերով:</p>	<p><b>Հոդված 48. Ընտրական իրավունքը և հանրաքվեի մասնակցելու իրավունքը</b></p> <p>4. Ընտրելու և ընտրվելու, ինչպես</p>	Առաջարկը չի ընդունվել:

	<p>նաև հանրաքվեներին մասնակցելու իրավունք չունեն դատական ակտով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցագործությունների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված անձինք:</p>		<p>նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:</p>	
19	<p><b>Հոդված 48. Հանրային ծառայության իրավունքը անցնելու</b></p> <p>1. Յուրաքանչյուր քաղաքացի իր ունակություններին և մասնագիտական պատրաստվածությանը համապատասխան մրցութային հիմունքներով օրենքով սահմանված հանրային ծառայության պաշտոնի անցնելու իրավունք ունի:</p> <p>2. Հանրային ծառայողները ծառայում են ամբողջ ժողովրդին: Նրանք պարտավոր են իրենց պարտականությունները կատարել անաչառ և</p>	<p>Առաջարկվել է հոդվածում ամրագրել որոշակի իրական երաշխիքներ ինչպես օրինակ, հանրային ծառայողի անփոփոխելիությունը քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում, հանրային ծառայողների շահերը ներկայացնող և պաշտպանող մարմինների անկախության սկզբունքը պետական մարմիններից:</p>	<p><b>Հոդված 48. Հանրային ծառայության իրավունքը անցնելու</b></p> <p>Յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p>

	<p>քաղաքականապես չեզոք՝ ելնելով բացառապես մասնագիտական նկատառումներից:</p> <p>3. Այս իրավունքի իրականացման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:</p>			
20.	<p><b>Հոդված 52. Հանրագրերի իրավունքը</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլ անձանց հետ մեկտեղ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք: Անհատական և կոլեկտիվ հանրագրերին առնչվող մանրամասները սահմանվում են օրենքով:</p>	<p>Առաջարկվել է ավելացնել դրույթ, որ հանրագրեր չեն կարող ներկայացվել դատարաններին:</p>	<p><b>Հոդված 53. Հանրագիր ներկայացնելու իրավունքը</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլոց հետ մեկտեղ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p>

21.	<p><b>Հողված 53. Քաղաքական ապաստանի իրավունքը: Արտաքսման կամ հանձնման արգելքը</b></p> <p>1. Քաղաքական հետապնդման ենթարկվող անձինք Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու իրավունք ունեն: Ապաստանի տրամադրման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:</p> <p>2. Ոչ ոք չի կարող արտաքսվել կամ հանձնվել օտարերկրյա պետությանը, եթե արտաքսման կամ հանձնման դեպքում լուրջ սպառնալիք կա, որ տվյալ անձը կարող է այդ երկրում ենթարկվել մահապատժի, խոշտանգումների կամ այլ անմարդկային, նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:</p>	<p>Աշխատանքային խումբը նշված հոդվածի 1-ին մասի կապակցությամբ իր մտահոգությունն էր հայտնել քաղաքական հետապնդման ենթարկվածին մուտքի իրավունք տրամադրելու պարտականության կապակցությամբ, ինչպես նաև հոդվածի 2-րդ մասով միջազգային պարտավորության առանձին ամրագրման մասով:</p>	<p><b>Հողված 54. Քաղաքական ապաստանի իրավունքը</b></p> <p>Քաղաքական հետապնդման ենթարկվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստան հայցելու իրավունք: Քաղաքական ապաստանի տրամադրման կարգը եւ պայմանները սահմանվում են օրենքով:</p>	<p>Առաջարկն ընդունվել է, հոդվածը վերախմբագրվել է:</p>
22.	<p><b>Հողված 55. Աշխատանքի ընտրության ազատությունը: Աշխատանքային այլ իրավունքներ: Հարկադիր աշխատանքի արգելքը: Այլընտրանքային ծառայություն</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:</p>	<p>Առաջարկվել է վերնագիրը համապատասխանեցնել 1-ին մասին:</p>	<p><b>Հողված 57. Աշխատանքի ընտրության ազատությունը եւ աշխատանքային իրավունքները</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p>

23.	<p><b>Հողված 57. Ձեռնարկատիրական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցության երաշխավորումը</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, այդ թվում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանում են օրենքով:</p> <p>2. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են:</p> <p>3. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:</p>	<p>Առաջարկվել է հողվածում սահմանել պետության պոզիտիվ պարտականությունը բացառելու շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն:</p>	<p><b>Հողված 59. Տնտեսական գործունեության ազատությունը եւ տնտեսական մրցակցության երաշխավորումը</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները եւ կարգը սահմանվում են օրենքով:</p> <p>2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները եւ դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:</p> <p>3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը եւ հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p>
-----	--	---	--	-------------------------------

24.	<p><b>Հոդված 58. Սեփականության և ժառանգման իրավունքը:</b>  <b>Հարկային պարտավորությունները</b>      4. Ոչ ոք չի կարող զրկվել իր սեփականությունից, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Սեփականությունից զրկելու նկատմամբ նախնական դատական վերահսկողության դեպքերը և կարգը սահմանվում են օրենքով:</p>	<p>Աշխատանքային խումբն առաջարկել էր սեփականությունից զրկումն իրականացնել բացառապես դատական կարգով, ինչպես գործող Սահմանադրությամբ է նախատեսված:</p>	<p><b>Հոդված 60. Սեփականության իրավունքը</b>      4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:</p>	<p><b>Առաջարկն ընդունվել է:</b></p>
25.	<p><b>Հոդված 59. Դատական պաշտպանության իրավունքը: Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններին դիմելը</b>      1. Յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:</p>	<p>Առաջարկվել է տեքստից հանել «Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված» բառերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական պաշտպանության են ենթակա նաև այլ ակտերով ամրագրված իրավունքները</p>	<p><b>Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը եւ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններին դիմելու իրավունքը</b>      1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:</p>	<p><b>Առաջարկն ընդունվել է:</b></p>

26.	<p><b>Հոդված 62. Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնություն ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:</p>	<p>Առաջարկվել է Սահմանադրության նախագծում 8-րդ գլխում նախատեսել առանձին հոդված փաստաբանության վերաբերյալ:</p>	<p><b>Հոդված 64. Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:</p> <p>2. Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման եւ փաստաբանների իրավահավասարության հիման վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները եւ պարտականությունները սահմանվում են օրենքով:</p>	<p><b>Առաջարկն ընդունվել է մասնակի,</b> նշված հոդվածում նախատեսելով 2-րդ մաս:</p>
27	<p><b>Հոդված 63. Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը</b></p> <p>Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների դեմ: Օրենքը կարող է նախատեսել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր:</p>	<p>Առաջարկվել է «դեմ» բառը փոխարինել «վերաբերյալ» բառով:</p>	<p><b>Հոդված 65. Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը</b></p> <p>Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Օրենքը կարող է սահմանել</p>	<p><b>Առաջարկն ընդունվել է:</b></p>

			ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր:	
28.	<b>Հոդված 64. Անմեղության կանխավարկածը</b> Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքին համապատասխան:	Առաջարկել է դատական ակտով մեղքն ապացուցված լինելու սկզբունքի նախատեսումը:	<b>Հոդված 66. Անմեղության կանխավարկածը</b> Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:	<b>Առաջարկն ընդունվել է:</b>
29.	<b>Հոդված 66. Մեղադրյալի պաշտպանության իրավունքը</b> <b>Հանցանք կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի.</b> 1) իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին.	Առաջարկվել է ավելացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետ. «6) բավարար միջոցներ չունենալու դեպքում անվճար նշանակված պաշտպան ունենալ:»:	<b>Հոդված 67. Մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը</b> Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝ 1) ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք.	Առաջարկը չի ընդունվել:
30.	<b>Հոդված 67. Նույն արարքի համար կրկին չդատվելու իրավունքը</b> 1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար: 2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում	Առաջարկվել է հանել երկրորդ մասը:	<b>Հոդված 68. Կրկին դատվելու արգելքը</b> 1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար: 2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանն օրենքին	Առաջարկը չի ընդունվել:

	գործի վերանայմանն օրենքին համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա:		համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երեւան եկած հանգամանքներ կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա:	
31.	<b>Հոդված 72. Օրինականության սկզբունքը հանցագործությունների սահմանման ժամանակ</b> Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին: Եթե տվյալ հանցանքը կատարելուց հետո օրենքը սահմանում է ավելի մեղմ պատիժ, ապա կիրառվում է վերջինս:	Առաջարկվել է հոդվածի վերջին նախադասությունը վերախմբագրել, այն առումով, որ ոչ միայն ավելի մեղմ պատիժ սահմանող օրենքը հետադարձ ուժ ունենա, այլ նաև առհասարակ պատժելիությունը վերացնող օրենքն ունենա հետադարձ ուժ:	<b>Հոդված 72. Հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը</b> Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին: Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացող օրենքն ունի հետադարձ ուժ:	<b>Առաջարկն ընդունվել է:</b>
32.	<b>Հոդված 76. Հիմնական իրավունքների ազատությունների սահմանափակումներն</b>	Առաջարկվել է լրամշակել այս հոդվածը:	<b>Հոդված 76. Հիմնական իրավունքների ազատությունների սահմանափակումներն</b>	Առաջարկը չի ընդունվել:

<p><b>արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ</b>  Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 22-25-րդ, 27-29-րդ, 34-36-րդ հոդվածներում, 37-րդ հոդվածի 1-ին մասում, 40-րդ հոդվածի 1-ին մասում, 46-րդ, 54-րդ, 59-րդ, 61-րդ, 63-րդ, 65-68-րդ և 70-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում:</p>		<p><b>արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ</b>  Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում, 52-րդ, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում:</p>	
--	--	---	--

33.	<p><b>Հողված 162. Դատարանները</b></p> <p>1. Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ:</p>	<p>Առաջարկվել է 1-ին մասից հանել «Սահմանադրական դատարանը» բառերը:</p>	<p><b>Հողված 163. Դատարանները</b></p> <p>1. Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ:</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p>
34.	<p><b>Հողված 163. Դատավորի կարգավիճակը</b></p> <p>3. Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Սահմանադրական դատարանի համաձայնությամբ: Սահմանադրական դատարանի դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Սահմանադրական դատարանի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ հանցանքի կատարման պահին կամ դրանից անմիջապես հետո: Նման դեպքի</p>	<p>Առաջարկվել է 3-րդ և 4-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ, ինչպես նաև լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս. «3. Դատավորը չի կարող կալանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաև նրա նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցվել՝ առանց բարձրագույն դատական խորհրդի համաձայնության: Դատավորը չի կարող ձերբակալվել, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալումն իրականացվում է</p>	<p><b>Հողված 164. Դատավորի կարգավիճակը</b></p> <p>3. Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Սահմանադրական դատարանի համաձայնությամբ: Սահմանադրական դատարանի դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Սահմանադրական դատարանի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p>

<p>մասին անհապաղ տեղեկացվում է Սահմանադրական դատարանի նախագահը:</p> <p>4. Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Բարձրագույն դատական խորհրդի համաձայնությամբ: Դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Բարձրագույն դատական խորհրդի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ հանցանքի կատարման պահին կամ դրանից անմիջապես հետո: Նման դեպքի մասին անհապաղ տեղեկացվում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահը:</p>	<p>հանցագործության կատարման պահին կամ անմիջապես դրանից հետո: Նման դեպքերում ձերբակալման մասին անմիջապես տեղեկացվում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահը:</p> <p>4. Սահմանադրական դատարանի դատավորը չի կարող կալանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաև նրա նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցվել՝ առանց Սահմանադրական դատարանի համաձայնության: Սահմանադրական դատարանի դատավորը չի կարող ձերբակալվել, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալումն իրականացվում է հանցագործության կատարման պահին կամ անմիջապես դրանից հետո: Նման դեպքերում ձերբակալման մասին անմիջապես տեղեկացվում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահը:</p>	<p>դեպքում ազատությունից զրկելը չի կարող տեսել յոթանասուներկու ժամից ավելի: Սահմանադրական դատարանի դատավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Սահմանադրական դատարանի նախագահը:</p> <p>4. Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Բարձրագույն դատական խորհրդի համաձայնությամբ: Դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Բարձրագույն դատական խորհրդի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տեսել յոթանասուներկու ժամից ավելի: Դատավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահը:</p>	
---	--	--	--

		11. Սահմանադրական դատարանի դատավորի և դատավորի աշխատավարձը չի կարող նվազեցվել նրա պաշտոնավարման ժամանակահատվածում:»:		
35.	<p><b>Հոդված 164. Դատավորների և դատարանների (Վճռաբեկ դատարանի պալատների) նախագահների նշանակման (ընտրության) կարգը, պաշտոնավարման ժամկետները</b></p> <p>3. Վճռաբեկ դատարանի դատավորներին ընտրությունն իրականացվում է մրցութային կարգով: Բարձրագույն դատական խորհուրդը մրցութային արդյունքներով Ազգային ժողովին ներկայացնում է Վճռաբեկ դատարանի դատավորների՝ յուրաքանչյուր տեղի համար երեք թեկնածու: Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երեք հինգերորդի ծայների մեծամասնությամբ ընտրված թեկնածուին պաշտոնի է նշանակում Հանրապետության նախագահը:</p> <p>4. Վճռաբեկ դատարանի</p>	<p>Առաջարկվել է 3-րդ և 4-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Վճռաբեկ դատարանի դատավորների նշանակումն իրականացվում է մրցութային կարգով: Բարձրագույն դատական խորհուրդը մրցութային արդյունքներով Հանրապետության Նախագահին ներկայացնում է Վճռաբեկ դատարանի դատավորների՝ յուրաքանչյուր տեղի համար երեք թեկնածու: Հանրապետության Նախագահը թեկնածուների կազմից նշանակում է Վճռաբեկ դատարանի դատավորներին:</p> <p>4. Վճռաբեկ դատարանի նախագահի և պալատների նախագահները նշանակվում են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, վեց տարի ժամկետով, բայց ոչ ավել, քան երկու անգամ»:</p>	<p><b>Հոդված 166. Դատավորների ընտրության և նշանակման կարգը</b></p> <p>3. Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ: Ազգային ժողովն առաջարկվող թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ծայների առնվազն երեք հինգերորդով՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից:</p> <p>4. Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, համապատասխան պալատի կազմից, վեց տարի ժամկետով: Նույն անձը Վճռաբեկ</p>	Առաջարկը չի ընդունվել:

	<p>պալատների նախագահները նշանակվում են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, վեց տարի ժամկետով՝ առանց վերանշանակման իրավունքի:</p>		<p>դատարանի պալատի նախագահ կարող է նշանակվել միայն մեկ անգամ:</p>	
36.	<p><b>Հոդված 173. Բարձրագույն դատական խորհրդի կազմը և կազմավորման կարգը</b></p> <p>1. Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասը անդամից, որոնցից հինգին ընտրում է Ազգային ժողովը՝ իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից, պատգամավորների առնվազն երեք հինգերորդի ձայների մեծամասնությամբ, հինգին՝ դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորների թվից:</p> <p>2. Ազգային ժողովի կողմից ընտրվող Բարձրագույն դատական խորհրդի անդամները պետք է լինեն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ունենան բարձր մասնագիտական որակներ և առնվազն տասնհինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձ:</p> <p>3. Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրվող</p>	<p>Առաջարկվել է հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p><b>«Հոդված 173. Բարձրագույն դատական խորհրդի կազմը և կազմավորման կարգը</b></p> <p>1. Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասնմեկ անդամից, որոնցից 4-ին ընտրում է Ազգային ժողովը՝ 2-ին իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից, և 2-ին՝ փաստաբանների պալատի խորհրդի կողմից առաջադրված փաստաբանների թվից, պատգամավորների առնվազն երեք հինգերորդի ձայների մեծամասնությամբ, յոթին՝ դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորների թվից:</p> <p>2. Ազգային ժողովի կողմից ընտրվող Բարձրագույն դատական խորհրդի անդամները պետք է լինեն միայն</p>	<p><b>Հոդված 174. Բարձրագույն դատական խորհրդի կազմը և կազմավորման կարգը</b></p> <p>1. Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասը անդամից:</p> <p>2. Բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամներին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող դատավորների թվից: Բարձրագույն դատական խորհրդում պետք է ընդգրկվեն դատավորներ բոլոր ատյանների դատարաններից: Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատարանի նախագահ կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ:</p> <p>3. Բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p>

<p>Բարձրագույն դատական խորհրդի անդամները պետք է համամասնորեն ներկայացնեն բոլոր ատյանների դատավորներին և ունենան դատավորի պաշտոնում առնվազն տասը տարվա պաշտոնավարման փորձ:</p> <p>4. Բարձրագույն դատական խորհրդի անդամները պաշտոնավարում են հինգ տարի և չեն կարող վերստին ընտրվել այդ պաշտոնում:</p> <p>5. Դատարանների նախագահները չեն կարող ընդգրկվել Բարձրագույն դատական խորհրդի կազմում:</p> <p>6. Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամների լիազորությունները կասեցվում են մինչև Բարձրագույն դատական խորհրդում նրանց պաշտոնավարման ժամկետի ավարտը:</p> <p>7. Բարձրագույն դատական խորհրդի անդամների վրա տարածվում են դատավորների համար Սահմանադրությամբ նախատեսված անհամատեղելիության պահանջները:</p> <p>8. Բարձրագույն դատական</p>	<p>Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ունենան բարձր մասնագիտական որակներ և առնվազն տասնհինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձ: Փաստաբան անդամները պետք է ունենան փաստաբանի առնվազն տասը տարվա մասնագիտական փորձ:</p> <p>3. Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրվող Բարձրագույն դատական խորհրդի անդամները պետք է համամասնորեն ներկայացնեն բոլոր ատյանների դատավորներին և ունենան դատավորի պաշտոնում առնվազն տասը տարվա պաշտոնավարման փորձ:</p> <p>4. Բարձրագույն դատական խորհրդի անդամները պաշտոնավարում են հինգ տարի և չեն կարող անընդմեջ ընտրվել այդ պաշտոնում:</p> <p>5. Դատարանների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահները չեն կարող ընդգրկվել Բարձրագույն դատական խորհրդի կազմում:</p> <p>6. Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամների լիազորությունները,</p>	<p>թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից: Ազգային ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատավոր:</p> <p>4. Բարձրագույն դատական խորհրդի անդամները ընտրվում են հինգ տարի ժամկետով՝ առանց վերընտրվելու իրավունքի:</p> <p>5. Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների համար Դատական օրենսգրքով կարող են սահմանվել անհամատեղելիության պահանջներ:</p> <p>6. Դատական օրենսգրքով կարող է սահմանվել Բարձրագույն դատական խորհրդում պաշտոնավարման ընթացքում դատավոր անդամների լիազորությունների կասեցման պահանջ:</p> <p>7. Բարձրագույն դատական</p>
---	---	--

	<p>խորհուրդը նախագահում է խորհրդի նախագահը, որն ընտրվում է հաջորդաբար՝ խորհրդի դատավոր և իրավաբան անդամների թվից, խորհրդի անդամների կողմից՝ օրենքով սահմանված կարգով:</p>	<p>ինչպես նաև փաստաբան անդամների փաստաբանական գործունեության արտոնագրերի գործողությունը կասեցվում են մինչև Բարձրագույն դատական խորհրդում նրանց պաշտոնավարման ժամկետի ավարտը:</p> <p>7. Բարձրագույն դատական խորհրդի անդամների վրա տարածվում են դատավորների համար Սահմանադրությամբ նախատեսված անհամատեղելիության պահանջները:</p> <p>8. Բարձրագույն դատական խորհուրդը նախագահում է խորհրդի նախագահը, որն ընտրվում է խորհրդի դատավոր անդամների թվից, խորհրդի անդամների կողմից՝ օրենքով սահմանված կարգով:»:</p>	<p>խորհուրդն իր կազմից Դատական օրենսգրքով սահմանված ժամկետով եւ կարգով ընտրում է խորհրդի նախագահ՝ հաջորդաբար դատավորների ընդհանուր ժողովի եւ Ազգային ժողովի կողմից ընտրված անդամներից:</p> <p>8. Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման մանրամասները սահմանվում են Դատական օրենսգրքով:</p>	
<p>37.</p>	<p><b>Հոդված 174. Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները</b></p> <p>1. Բարձրագույն դատական խորհուրդը՝</p> <p>10) հաստատում է իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները և ներկայացնում կառավարությանը՝</p>	<p>Առաջարկվել է 1-ին մասի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «հաստատում է իր, ինչպես նաև դատարանների նախագահների ներկայացմամբ՝ դատարանների ծախսերի նախահաշիվները և ներկայացնում կառավարությանը՝ պետական</p>	<p><b>Հոդված 175. Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները</b></p> <p>1. Բարձրագույն դատական խորհուրդը՝</p> <p>9) հաստատում է իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները եւ ներկայացնում Կառավարություն՝ օրենքով</p>	<p>Առաջարկները չեն ընդունվել:</p>

	<p>պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար, ընդհանուր վերահսկողություն է իրականացնում դատարանների բյուջետային միջոցների օգտագործման նկատմամբ:</p>	<p>բյուջեի նախագծում ընդգրկելու համար, ընդհանուր վերահսկողություն է իրականացնում դատարանների բյուջետային միջոցների օգտագործման նկատմամբ:»: Առաջարկվել է նաև լրացնել նոր մաս հետևյալ բովանդակությամբ. «Բարձրագույն դատական խորհրդի որոշումը՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, կարող է բողոքարկվել Վճռաբեկ դատարան՝ Դատական օրենսգրքով սահմանված ժամկետում և կարգով:»:»</p>	<p>սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:</p>	
--	--	--	---	--

<p>38</p>	<p><b>Գլուխ 8. Դատախազությունը և քննչական մարմինները</b>  <b>Հոդված 175. Դատախազությունը</b>          1. Դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:          2. Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝          1) հարուցում է քրեական հետապնդում.          2) հսկողություն է իրականացնում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ.          3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը.          4) պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան.          5) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.          6) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:          3. Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա:</p>	<p>Առաջարկվել է վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.          «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ»,          ինչպես նաև 177-րդ հոդվածի դրույթները տեղավորել 176-րդ հոդվածում, իսկ 177-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.  <b>«ՀՈՂՎԱԾ 176. ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ</b>          Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ: Փաստաբանությունը գործում է անկախության, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա: Փաստաբանն իր գործունեությունն</p>	<p><b>Գլուխ 8 Դատախազությունը և քննչական մարմինները</b>  <b>Հոդված 176. Դատախազությունը</b>          1. Դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:          2. Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝          1) հարուցում է քրեական հետապնդում.          2) հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ.          3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը.          4) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.          5) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:          3. Դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:          4. Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների</p>	<p>Առաջարկը չի ընդունվել, սակայն փաստաբանությանը վերաբերող որոշակի դրույթներ նախատեսված են նախագծի 64-րդ հոդվածի 2-րդ մասում:</p>
-----------	---	---	---	---

<p>4. Դատախազության կազմակերպման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:</p> <p><b>Հոդված 176. Գլխավոր դատախազը</b></p> <p>1. Գլխավոր դատախազին օրենքով սահմանված կարգով նշանակում է Ազգային ժողովը՝ 6 տարի ժամկետով՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երեք հինգերորդի ձայների մեծամասնությամբ: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել գլխավոր դատախազ:</p> <p>2. Օրենքով սահմանված դեպքերում Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երեք հինգերորդի ձայների մեծամասնությամբ կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին:</p> <p><b>Հոդված 177. Քննչական մարմինները</b></p> <p>1. Քննչական մարմինները մինչդատական վարույթի շրջանակներում կազմակերպում են նախաքննության իրականացումը:</p>	<p>իրականացնելիս անկախ է, ղեկավարվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և օրենքներով, փաստաբանների պալատի կանոնադրությամբ և փաստաբանի վարքագծի կանոնագրքով:</p> <p>Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը փաստաբանների մասնագիտական, անկախ, միասնական, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն է, որի առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:</p> <p>Փաստաբանների պալատի խնդիրներն են՝</p> <p>1) պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում.</p> <p>2) կազմակերպել փաստաբանների</p>	<p>շրջանակում՝ օրենքի հիման վրա:</p> <p>5. Դատախազության կազմավորման եւ գործունեության կարգը սահմանվում է օրենքով:</p> <p><b>Հոդված 177. Գլխավոր դատախազը</b></p> <p>1. Գլխավոր դատախազն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել գլխավոր դատախազ:</p> <p>2. Գլխավոր դատախազ կարող է ընտրվել երեսունհինգ տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով եւ մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը: Գլխավոր դատախազի համար օրենքով կարող են</p>	
---	--	--	--

	<p>2. Քննչական մարմինների լիազորությունները, կազմակերպման գործունեության սահմանվում են օրենքով:</p>	<p>արտոնագրման գործընթացը.</p> <p>3) կազմակերպել փաստաբանի ունկնդիրների մասնագիտական ուսուցումը և փաստաբանների վերապատրաստումը.</p> <p>4) վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման նկատմամբ.</p> <p>5) միջոցներ ձեռնարկել փաստաբանության հեղինակության բարձրացման ուղղությամբ.</p> <p>6) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով յուրաքանչյուրի համար հավասարապես ապահովել մատչելի և արդյունավետ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրականացումը:»:</p>	<p>սահմանվել լրացուցիչ պահանջներ:</p> <p>3. Օրենքով նախատեսված դեպքերում Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով կարող է պաշտոնանկ անել Գլխավոր դատախազին:</p> <p><b>Հոդված 178. Քննչական մարմինները</b></p> <p>1. Քննչական մարմիններն օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով կազմակերպում եւ իրականացնում են մինչդատական քրեական վարույթը:</p> <p>2. Քննչական մարմինների կարգավիճակը, լիազորությունները, կազմավորման եւ գործունեության կարգը սահմանվում են օրենքով:</p>	
--	---	--	--	--